

յութիւն ունէին Եւրոպայի մէջ: Նոյն ատեն ոսկին ու արծաթը շատ հազուադիւտ էր Պարսկաստանի մէջ. ատոնք, սակայն, վերադարձող կարաւաններու շնորհիւ սկսան փայլիլի: Եւ ատոր կը պարտի (Պարսից) թագաւորութիւնը իր հարստութիւնը ցայսօր» :2)

Ապա կ'աւելցնէ. «Թագաւորը այլեւս չի օժանդակեր անոնց (հայոց) առեւտուրին ապրանք հայթայթելով: Ջուլֆայի բնակիչները, շնորհիւ իրենց ներկայացուցիչներուն եւ գործակատարներուն, կը շարունակեն այս ընդարձակ առեւտուրը եւ բոլոր աշխարհին կը հայթայթեն ինչ որ հետաքրքրական եւ արժէքաւոր է Արեւելքի մէջ: Միջնորդները հայեր են: Անոնք որոշ շահի մը համար յանձն կ'առնեն ապրանքը տանող կարաւաններուն հետ երթալ, եւ իրենց գործատէրուն համար ապրանքները լաւազոյն զիններով կը վաճառեն» :3)

Սակայն, Թուանըֆօրէն առաջ ուրիշ ֆըրանսացի ուղեգիր մը, ձան Պաղեսդ Թավէրնիէ, կը վկայէ, որ Շահ Աբբաս երկրին հում մետաքսին միակ տէրն էր եւ Եւրոպայի հետ մետաքսի գործ ընելը պետական մենաշնորհ էր: Նախ՝ Ֆրանսայի Հանրի Դ. թագաւորին մօտ զեսպան զրկեց՝ այդպիսով թըքաց մետաքսի արտածման դէմ մրցելու համար: Բայց այս փորձը չյաջողեցաւ: Յետոյ, Սպանիա զրկեց Պարսիկ վաճառական մը, Սպանիոյ թագաւորին մօտ զրկուած Պարսիկ զեսպանութեան մը հետ: Այս Պարսիկ վաճառականը (որ Պարսիկ էր եւ ոչ թէ Պարսկահայ), որուն յանձնուած էր մեծ քանակութեամբ հում մետաքս, գործը չկրցաւ յաջողութեամբ պտակել, եւ հում մետաքսն ալ փճացաւ, կորսուեցաւ:

15 տարի վերջ, այս անգամ Սպանիացի վաճառականի մը տղուն հետ Շահ Աբբաս մեծաքանակ հում մետաքս զրկեց Վենետիկ: Այս ալ միւսներուն նման անյաջող անցաւ, եւ մետաքսը մոխուեցաւ:

Վերջապէս, «Շահ Աբբաս, իր այս փորձերով նկատելով իր հպատակներուն քիչ հա-

կումը դէպի առեւտուրը, իր ուշադրութիւնը դարձուց հայերու վրայ, որոնք երկար ճամբորդութեանց տոկացող մարդիկ էին, ժուժկալ անձեր եւ կորովի աշխատողներ եւ որոնք իրենց քրիստոնեայ ըլլալուն պատճառով, կըրնային աւելի ազատութեամբ առեւտուր ընել Գրիստոնէից մէջ: Եւ այսպէս զանոնք ընտրեց իրր ամենէն յարմարները յատուկ առեւտուրի: Ատոր վրայ ան ընտրեց անոնց մէջէն ամենէն խելացիները, եւ իւրաքանչիւրին յանձնեց որոշ քանակութեամբ մետաքսի հակեր, ըստ իրենց ընդունակութեան: Ատոր փոխարէն անոնք, իրենց վերադարձին, պէտք է վճարէին թագաւորին նշանակուած բանաւոր սակ մը: Թագաւորը անոնց տրամադրեց ուրիշ ինչ որ պէտք էր իրենց ծախքերուն եւ շահուն համար: Այս ժողովուրդը կարճ ժամանակի մէջ այնքան փորձառութիւն շահեցաւ, որ այժմ չկայ առեւտուրի տեսակ մը, որուն անոնք ձեռք չգարնեն, որովհետեւ անոնք այժմ կը յաճախեն մինչեւ Տունզուին, ձալա եւ Փիլիպեան կղզիները, իրապէս ամբողջ Արեւելքի ամէն կողմը, բացի Չինաստանէ եւ Ճափոնէ: Սակայն, երբ անոնք չհարստանան, երբեք ետ չեն դառնար իրենց հայրենիքը, որովհետեւ ստիպուած են կամ ճիշդ հաշիւ տալ եւ կամ արագ ու խիստ արդարութեան մը ենթարկուիլ, որ երբեք չ'անտեսեր իրենց Տիրոջ (Շահին) համար վատ աշխատող գործակատարները» :1):

1) The Six Travels... London, 1684, էջ 158-9: Հետաքրքրական են հայ վաճառականներու ճամբորդութեան մասին իր սա ծանօթութիւնները: «Եւ, արդարեւ, հայերը առեւտուրի այնքան աւելի յարմար են, խնայող եւ շատ ժուժկալ ժողովուրդ մըն են, որ չեմ դիտեր թէ իրենց առաքելութենէն թէ իրենց ազահութենէն: Երբ անոնք երկար ճամբու կը սկսին, իրենց հետ կը տանին միայն դաթայ (bisket), չորցած եզան միս (փաստրմա), սոխ, հարած իւղ, ալիւր, զինի եւ չորցած մրդեղէն: Անոնք թարմ ուտելիք երբեք չեն զներ, բացի լեռնային երկիրներու մէջ, երբ դառան կամ ուլի թարմ մսի կը հանդիպին աժան գնով: Անոնք բոլորն ալ ունին ձուկ որսալու ասեղ,

2) A Voyage into Levant, Vol. III, 229:
3) Անդ՝ էջ 230: